զամենայն մեղս յանցանաց մերոց, քանզի ծառայ ոմն ոչ կարէ գործել ոչ բարի եւ ոչ չար։

Եւ արդ գոհանամ զքէն Տէր որ ցուցեր մասն մի փափագանաց սրտի իմոյ, կատար հատուցանելով զրքուկս այս, եւ ակն ունիմ 'ի քէն Տէր, որպէս ունիս 'ի ձեռին քոյ ամենայն շրջան եթէ 'ի յերկինս եւ եթէ երկրի դալարագոյ կարծրութիւնն կենդանակերպի մերոյ, զի հնչեցուցանէ փոքրիկ իմաստութիւն 'ի բնութիւնս ազգին հայոց, որ ընդ տիեզերս ցրուեալ, եւ արա՛ նախանձայուզ դպրաց մերոց զի ելցեն ընդդէմ մերոց բնական առաջադրութեան եւ շարեսցեն իմաստութեամբ յորդորմունս ազատութեան եւ տուր սիրտ Սուրբ եւ հոգի զուարդ առ ազգն հայոց, զի սիրով հնազանդեսցեն Օրինաց եւ գտցեն փրկութիւն 'ի ծառայութենէ այլ ազգաց, զի կարող լինիցիմք հասարակ ազգաւ ազատապէս Պաշտել Ամենասուրբ յԱնուն քոյ, որում կրկնի ծունր եւ երկրպագութիւն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից Ամէն։